

## «Պաշարների շտեմարան» նոր կայքի ուղեցույց

<https://lib.armedu.am/>

«Պաշարների շտեմարանը» «Հայկական կրթական միջավայր» (<http://www.armedu.am/>) պորտալի կայքերից է, որի հիմնական նպատակն ուսումնական և մեթոդական էլեկտրոնային պաշարները մեկ միասնական տարածքում հավաքելն ու դրանցից օգտվելու ազատ հնարավորության տրամադրումն է բոլոր այցելուներին:

Մինչ այժմ գործող «Պաշարների շտեմարանը» ընդգրկում է շուրջ 15000 պաշար, ունի 9500-ից ավելի գրանցված օգտատեր, մշակվել էր ԿՏԱԿ-ում և ստեղծվել էր Վիվասել ՄՏՄ-ի հովանավորությամբ՝ 2012 թվականին:

Շտեմարանի արտաքին տեսքը, գործնական և տեխնիկական լուծումներն արդիականացնելու նպատակով ստեղծվել է նոր կայք, որը գործելու է նույն վերնագրով, նույն համացանցային հասցեում՝ <https://lib.armedu.am/> և ծառայելու է նույն նպատակին:

Նոր կայքի գործարկման պահից «Պաշարների շտեմարանի» հին կայքը կունենա <https://old-lib.armedu.am/> հասցեն և ակտիվ կլինեն բոլոր պաշարների նախկին հղումները:


## Օգտագործման ուղեցույց

Ինչպես նախկին, այնպես էլ նոր կայքի պաշարները բաց են և ազատ հասանելի բոլոր այցելուներին՝ պաշարի էջն ուսումնասիրելու, կցված նյութերը բեռնելու և օգտագործելու, գնահատումներին ու մեկնաբանություններին ծանոթնալու համար:

Սակայն պաշարներ տեղադրելու, տեղադրված պաշարները գնահատելու և մեկնաբանություններ ավելացնելու հնարավորություն ունեն միայն կայքում գրանցված օգտատերերը:

# 1. Գրանցում

Կայքում գրանցվելու համար պետք է սեղմել կայքի Գլխավոր էջի վերին աջ անկյունում «Գրանցում» բառի վրա,



որից հետո բացվող «ԳՐԱՆՑՈՒՄ» էջում

**ԳՐԱՆՑՈՒՄ**

Համակարգում գրանցվելն անհրաժեշտ է պաշարներ տեղադրելու, արդեն գոյություն ունեցող պաշարները մեկնաբանելու ու գնահատելու համար: Արդեն տեղադրված պաշարները ներբեռնելու ու օգտագործելու համար գրանցումն անհրաժեշտ չէ:

Անուն Ազգանուն \* **1**

Էլ. փոստ \* **2**

Գաղտնաբառ \* **3**

Կրկնել գաղտնաբառը \* **4**

Մուտքագրեք նկարում պատկերված ծածկագիրը **5**

**6**

**Գրանցվել**

Պետք է լրացնել բոլոր տողերը՝ հատուկ ուշադրություն դարձնելով ցուցումներին.

1. Անուն ազգանուն
2. Նշել գործող Էլ. փոստի հասցե (e-mail)
3. Ընտրել «Գաղտնաբառ»

4. Կրկնել գաղտնաբառը
5. Մուտքագրել նկարում պատկերված ծածկագիրը
6. Գրանցվել:

Կայքի ղեկավարությունն առավելագույնը 1-2 աշխատանքային օրվա ընթացքում կհաստատի գրանցումը, որի մասին օգտատերը կտեղեկացվի էլեկտրոնային նամակով:

## 2. Մուտք՝ համակարգ

Գրանցված օգտատերերը կայք մուտք գործելու համար պետք է սեղմեն «Մուտք գործել» հրամանին և լրացնեն համապատասխան դաշտերը՝



1. «Էլ. փոստ»
2. «Գաղտնաբառ»:

ՄՈՒՏՔ

1

2

[Վերականգնել գաղտնաբառը](#)

Մուտք

Գաղտնաբառը չհիշելու դեպքում, կա «Վերականգնել գաղտնաբառը» հնարավորությունը:

**ՄՈՒՏՔ**

Էլ. փոստ

Գաղտնաբառ

Վերականգնել գաղտնաբառը

**Մուտք**

Բացվող պատուհանում պետք է լրացնել անհրաժեշտ դաշտերը՝

1. Էլ. փոստ
2. Անցնել «Վերականգնել» հղումով,

**ԳԱՂՏՆԱԲԱՌԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ**

Էլ. փոստ **1**

**2 Վերականգնել**


որից հետո ձեր նշած էլ. հասցեին կուղարկվի գաղտնաբառի վերականգնման ընթացակարգը:

### 3. Պաշարի տեղադրում

Պաշար տեղադրելու համար կայքի գրանցված օգտատերը հաջողությամբ մուտք գործելուց հետո գլխավոր էջի վերևի աջ անկյունում կտեսնի իր անուն ազգանունը, որի վրա սեղմելուց հետո կբացվի երկու էջերի հղումներ.



1. «Իմ պաշարները» (տեղադրած պաշարների ցանկը)
2. «Անձնական էջ» (անձնական տվյալները)



«Իմ պաշարները» էջում, պաշար չունենալու դեպքում կտեղեկացվի, որ պաշար չկա, իսկ արդեն տեղադրված պաշարներ ունենալու դեպքում կերևա դրանց ցանկը և «Մտեղծել նոր պաշար» տողը:

**ԻՄ ՊԱՇԱՐՆԵՐԸ**

ՄՏԵՂԾԵԼ ՆՈՐ ՊԱՇԱՐ

N	Նկար	Վերնագիր	Կարգավիճակ	Միջին գնահատական	Հրատարակման ամսաթիվ	Խմբագրել
1		<a href="#">ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԽԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՐՑԱԿՆԵՐԸ - 2022 թ.</a>	Հրատարակված	★ ★ ★ ★ ★	Այսօր 16:42	
2		<a href="#">Հանրակրթական հիմնական ընդհանուր մասնագիտացված և հատուկ պետական շրջադերձ հրայկանացուող ուս. հաստատությունների 2021-2022 և 2022-2023 ուս. տարիների զգնական քառամասնական մեթ.</a>	Հրատարակված	★ ★ ★ ★ ★	Այսօր 11:07	

«Ստեղծել նոր պաշար»-ի վրա սեղմելուց հետո կբացվի պաշարի էջը, որտեղ անպայման պետք է լրացվեն «պարտադիր դաշտերը» (նշված են աստղանիշով), դրանք են

1. Վերնագիր
2. Պաշարի նկարագրություն
3. Կցել ֆայլեր և լրացնել ֆայլի վերնագիր
4. Ֆիլտրեր (ենթակատեգորիաներում)
5. Կախվող ֆիլտրեր, եթե կան (կատեգորիաների ներքևում)
6. Հեղինակ

Բացի պարտադիր լրացվող դաշտերը, ցանկության դեպքում կարող եք գրել բանալի բառեր, տեղադրել Youtube հղում, ավելացնել գլխավոր նկար, ֆոտոշարք, ինչպես նաև՝ լրացնել նկարագրություններ:

Պաշարը կստեղծվի, միայն այն դեպքում, երբ կցված է նկար, ֆայլ կամ ՅուԹյուբ-ի հղում և լրացված են պահանջվող բոլոր պարտադիր տվյալները:

Նոր պաշարի էջը ճիշտ լրացնելու դեպքում «Պահպանել» հրամանից հետո տեղադրողի էջում երևում է հետևյալ հաղորդագրությունը՝

**ՊԱՇՏԱՆԻ ԿԻՆՈՑԵՆՏ**

Պաշարը ստեղծվել է: Պաշարը հասանելի կլինի բոլորի համար արմինիստրատորի հաստատումից հետո: X

Հիմնական    Հավելյալ ինֆորմացիա    Պաշարի էջ

Վերնագիր\*    Ֆիլտրներ\*

ՌՈՒԿԱՑ ԼԵԶՎԻ մարզային փոլի ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ և ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ - 2022թ.    Բ. ՁԱՅԱՍՅԱՆ


Հաջողությամբ տեղադրված պաշարը կայքի բոլոր օգտատերերին տեսանելի (հրապարակված) է դառնում միայն կայքի ղեկավարության հաստատումից հետո, իսկ պաշարի հաստատման մասին տեղեկացնող նամակը ուղարկվում է օգտատիրոջ՝ անձնական էջում լրացված էլ. հասցեին:

Պաշար տեղադրողը, պաշարի հրապարակումից հետո էլ հնարավորություն ունի այն խմբագրել՝ ավելացնել կամ հեռացնել նյութեր, նկարներ, հղումներ: Խմբագրված պաշարը նույնպես կհրապարակվի միայն հաստատումից հետո:

Պաշարի ամբողջական հեռացումը կայքից նույնպես հաստատվում է կայքի ղեկավարության կողմից՝ տեղադրողից ծանուցում ստանալ դեպքում:

#### 4. Գնահատում եւ մեկնաբանություն

Գրանցված և մուտք գործած օգտատերը կարող է գնահատել ցանկացած պաշար՝



սեղմելով Պաշարի էջի ներքևում գտնվող «Գնահատել պաշարը» արտահայտության ներքևի աստղերի վրա, իսկ աջ մասում միշտ տեսանելի է մինչ այդ եղած գնահատումների միջին թվաբանական արժեքը:

Գնահատումների հատվածից ավելի ներքև ստեղծված է նաև Մեկնաբանություն ավելացնելու հնարավորությունը: Մեկնաբանությունները նույնպես տեսանիլի (հրապարակված) կլինեն բոլոր այցելուներին կայքի ղեկավարության հաստատումից հետո:

## 5. Որոնում

Որոնումը կատարվում է կայքի վերին մասի «Փնտրել պաշար» դաշտի միջոցով. Ձեր կողմից ներմուծած բառը փնտրվում է պաշարի վերնագրի, նկարագրության և հեղինակի անվան մեջ:

Ըստ յուրաքանչյուր պաշարի էջում եղած ֆիլտրերի և բանալի բառերի կարելի է նաև տեսակավորել, խմբավորել պաշարները: